

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 12.09.2018թ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Փանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի  
անգլերենի թափուր տեղի համար:

Ուսուցիչների պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ  
դասարաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների  
ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ  
նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին  
հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-  
ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և  
աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը  
հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության  
դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում  
աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնեն բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 12-ից **մինչև** հոկտեմբերի 10-ը ներառյալ,  
ամեն օր՝ **ժամը 10:00-ից մինչև 15:00-ը**, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 12-ին **ժամը 14:00-ին**, Շիրակի մարզի Փանիկի  
միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 61-66-18 հեռախոսահամարով:



«Փանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն .

/Զ. Կարապետյան/